

րատեան եղբարք, Մկրրտիչ Քասարճեան և Յովհ. Անդրէասեան. իսկ ամէրիգանի և առնասարակ ճերմակեղէնի վրայ մեծաքանակ կը գործէին Երեւում Փափազեան, Հարենց Գարրիէլ, Սահակ Ղազարոսեան, Պետրոս և Պօղոս Ժամկոչեան, Ստամպոլլըեան, Խիւտավէրտի օզլու, Փափազեան եւ ուրիշներ՝ կարգ մը յոյն մեծ վաճառականներու հետ: Ոսկան Արսէնեան կը գործէր մանած բամբակի վրայ, Կիւքրիսթ Կ. Թիրեաքեան պարսիկ առեւտուրներու: Ա. Յ. Բէհեանեան շալի ու ամէրիգանի, Գասպար և Աւետիս Լաթիֆեան նոյնպէս, Շահվէքիլեան Յարութիւն, Լեւոն Սէմէրճեան գունաւորներու և մատամբոյի, ու Մ. Միքայէլեան և Աւետիսեան եղբարք թաշկէնի զուրպայի և նորավաճառներու վրայ:

Պոլսի այս վաճառականներուն հաշիւները կարճանագրէին տոմարագիրտօրէն վարժ գրագիրներ⁽¹⁾, որոնց շատը գիտէին նաեւ ֆրանսերէն ու անգղիերէն և որոց մէջ առաջնակարգ էին՝ Թորգոմեան Պօղոս՝ Կիւլպէնկեանց քով, Լիմոնճեան Բերորէ՝ Թոքատեանց քով, Մուտովագ Գարեգին՝ նախ Գարակէօղեանց ապա Յակոբեանց քով, Նշան Տիւզէնճեան՝ Գարակէօղեանց քով, որ և գործնական տոմարակալութեան վրայ հրատարակութիւններ ըրած է, Յակոբ Հաճեան՝ Եղիա Կ. Պէյլէրեանի քով, Շէվահիրճեան Գառնիկ՝ նախ Գէորգ Մուրատեանի քով և ապա առանձին վաճառատուն մը բանալով սօքումայի և գունաւորներու, Տիգրան Գափամաճեան՝ նախ Ֆնտըքլեանց ապա Թ. Յ. Գարակէօղեանց քով, Ղազարոս՝ Յակոբեանց քով, Սարգիս Ղուկասեան՝ Տիգրան Ղոնչէկիւլի քով, Գրիգոր Ալեանաք-

(1) Կրկնատումարի զիւտն ըրած են նախ Ջուղայեցի վաճառականը, որոցմէ մաս մը Իտալիա և Հոլանտա անցնելով՝ իրենցմէ Եւրոպայի անցաւ այս ուսումը: